«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝Երաժշտառիթմական վարժությունները որպես երեխայի ռիթմի զգացողության միջոց

Դաստիարակ՝ Լիլիթ Ասատրյան

Մանկապարտեզ՝ «Ռինդի մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Գլուխ 1 Նախադպրոցականների երաժշտական դաստիարակության խնդիրներն ու առանձնահատկությունները,զարգացման մեթոդներն ու հնարները……5

Գլուխ 2 Երաժշտառիթմիկ վարժությունները որպես երեխայի ռիթմի զգացողության միջոց……9

Եզրակացություն……15

Գրականության ցանկ……16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Մահվան արժանի է այն ժողովուրդը, որ զուրկ է գեղարվեստե, որովհետև ժողովուրդ մը՝ որ գեղարվեստ չունի, կնշանակե թե զգալու կարողություն չունի: Եվ ի՞նչ է ժողովուրդ մը՝ որ չի զգար». Կոմիտաս

Երեխայի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման գործում շատ կարևոր է երաժշտության դերն ու նշանակությունը: Այն անմիջական և խոր ազդեցություն է ունենում մարդու վրա դեռ վաղ մանկության տարիներից և մեծ տեղ է զբաղեցնում նրա ընդհանուր մշակույթային զարգացման գործում: Երաժշտությունն ուղեկցում է մարդուն ամբողջ կյանքի ընթացքում: Այն գեղագիտական և հոգևոր մեծ աղբյուր է երեխայի համար:

Երաժշտական տպավորությունները հարստացնում են երեխայի հույզերը և զարգացնում շրջապատող աշխարհի գեղարվեստական ընկալման կարողությունը: ՈՒրախ ,աշխույժ, հերոսական երաժշտությունը ոգևորում է նրան , բարձրացնում տրամադրությունը,<<աշխատունակությունը>>:Հանգիստ, քնարական երաժշտությունը թուլացնում է լարվածությունը, հանգստացնում և խաղաղեցնում մարդուն: Հաշվի առնելով երաժշտության մեծ ազդեցությունը երեխայի զգացմունքների վրա, հարկավոր է այն մատուցել նրա աշխարհընկալմանը , և ուսուցանել այնպիսի ստեղծագործություններ, որոնք կնկարագրեն և կբացահայտեն շրջակա աշխարհը: Հայտնի է , որ բնությունը և մարդկային ապրումներն են երաժշտական ոգեշնչման աղբյուր: Մտավոր և ֆիզիկական զարգացման ներդաշնակությունը, ինչպես նաև գեղագիտական վերաբերմունքը կյանքի երևույթների և արվեստի նկատմամբ, երեխայի՝ որպես անհատի ձևավորման անհրաժեշտ նախադրյալներ են:

Երեխային գեղեցիկի աշխարհին հաղորդակից դարձնելու առավել նպաստավոր տարիքը նախադպրոցականն է: Շփումը երաժշտության հետ գեղագիտական դաստիարակության ամենակարևոր մասն է, քանզի երաժշտությունն ազդում է երեխայի զգացմունքների և շրջակա աշխարհի նկատմամբ նրա վերաբերմունքի վրա: Այդ պատճառով էլ առավել կարևոր է երաժշտության դաստիարակի բազմակողմանի պատրաստվածությունը:Մասնագիտական վարպետությունն ու փորձը, գիտելիքների ու կարողությունների ճիշտ կիրառումը երեխաների գեղագիտական դաստիարակության գործնթացում:

ՈՒսումնասիրելով կյանքի օրենքները, տեսնելով բնության մեջ շարժման ռիթմը՝ բժիշկները, երաժիշտները ,մանկավարժները եկան այն եզրակացության , որ երեխաների առողջապահական և դաստիարակչական խնդիրները լուծելու համար շատ կարևոր է երաժշտության և շարժման համատեղ կիրառումը ։Շարժման միջոցով բացահայտվում են երաժշտական ստեղծագործության բովանդակությունը,կառուցվածքը, բնույթը, տեմպը,ուժգնությունը։ Միաժամանակ շարժումը նպաստում է երաժշտական ստեղծագործության գիտակցական ընկալումը։

Սույն աշխատանքի օբյեկտն է ուսումնական գործնթացը նախադպրոցական ուսումնական հաստատությունում, իսկ առարկան՝ կրտսեր նախադպրոցական տարիքի երեխաների երաժշտառիթմիկ շարժման կարողությունների զարգացումը։

Ուսումնասիրության նպատակն է զարգացնել երեխաների երաժշտության ընկալումը և ռիթմական շարժումը։ Այս նպատակին հասնելու համար մեր առջև սահմանել ենք հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել թեմայի առնչվող մասնագիտական գրականություն.
- Բացահայտել երեխայի ռիթմի զգացողությունը, խաղային, պարային շարժումները կատարել երաժշտությանը համապատասխան, սովորեցնել տեսնել և գնահատել գեղեցիկը ,զարգացնել գեղագիտական ճաշակը։

Սույն աշխատանքը բաղկացած է ներածությունից , երկու հիմնական գլուխներից, եզրակացություն բաժնից, օգտագործված գրականությունից։

Աշխատանքի ներածական հատվածում ներկայացվել է թեմայի արդիականությունը, օբյեկտն ու առարկան, նպատակն ու խնդիրները։

Աշխատանքի առաջին գլխում խոսել ենք թեմային առնչվող մասնագիտական գրականությունից հայտնի տարբեր տեսաբանների վերլուծությունների և ուսումնասիրությունների մասին։

Աշխատանքի երկրորդ գլխում ներկայացրել ենք կատարված հետազոտության ընթացքը, արդյունքները։Վերջում ներկայացրել ենք աշխատանքի կատարման արդյունքում եզրահանգում։

Գլուխ1. Նախադպրոցականների երաժշտական դաստիարակության խնդիրներն ու առանձնահատկությունները, զարգացման մեթոդներն ու հնարները

Գեղագիտական դաստիարակությունը կարևոր տեղ ունի նախադպրոցականների դաստիարակության համակարգում, այն նպաստում է երեխայի հուզական ոլորտի զարգացմանն ու զգայական փորձի հարստացմանը, ակտիվացնում է իմացական գործունեությունը, բացահայտում ստեղծագործական կարողությունները և խթանում դրանց զարգացումը: Ճիշտ կազմակերպված գեղագիտական դաստիարակությունը ձևավորում է երեխաների գեղագիտական գիտակցությունը (տարրական գիտելիքներ արվեստի և գեղեցիկի մասին, գեղեցիկը ճանաչելու, նկատելու և գնահատելու կարողություններ, գեղեցիկի պահանջմունք և գեղագիտական ճաշակ), գեղագիտական, գեղարվեստական ընդունակություններն ու կարողությունները (նկաչություն, ապլիկացիա, ծեփակերտում և այլն): Այս կարողությունները կարևոր են համակողմանի զարգացած անձնավորության ձևավորման համար: Նախադպրոցական, հատկապես կրտսեր նախադպրոցական տարիքում երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնական նպատակը երեխաների գեղագիտական գիտակցության և ճաշակի ձևավորումն է: Գեղագիտական դաստիարակության խնդիրները կարող ենք բաժանել երկու խմբի:

Առաջին խումբը նպաստում է երեխաների գեղագիտական գիտակցության ձևավորմանը, ինչը ներառում է գեղեցիկի, արվեստի մասին տարրական գիտելիքներ. գեղեցիկին կամ տգեղին հուզականորեն համարժեք արձագանքելու ունակություն. գեղեցիկը նկատելու և գնահատելու կարողություն. գեղեցիկը ճանաչելու պահանջմունք. գեղագիտական ճաշակ:

Երկրորդ խմբի խնդիրները նպաստում են գեղագիտական գեղարվեստական ընդունակությունների զարգացմանն ու կարողությունների ձևավորմանը:Այս տարիքում այդպիսի խնդիրներ կարող են լինել նկարչական ունակությունների և կարողությունների ձևավորումը.ծեփակերտման ունակությունների և կարողությունների ձևավորումը.ապլիկացիայի ուսուցումը.կառուցողական (ճարտարապետա-շինարարական) ունակությունների և կարողությունների ձևավորումը.երաժշտական ընդունակությունների զարգացումը, երաժշտա—ռիթմիկ կարողությունների ձևավորումը:

Երաժշտությունը մի յուրահատուկ լեզու է, որը շրջապատի համար մատչելի է դարձնում մարդու ներքին ապրումները, դարձնելով դրանք «լսելի»: Երաժշտությունը որոշ ժամանակ տևող հնչյունների հիացմունք առաջացնող ամբողջություն է՝ ներդաշնակության մեջ: Դեռևս հին տրակտատներում նշվում է, որ երաժշտությունը տիեզերական ներդաշնակություն է: Մարդու կյանքում այն միշտ մեծ դեր է ունեցել: Կասկած չկա, որ երաժշտությունը մեծ ազդեցությունն ունի մարդու հոգեկանի վրա՝ առաջացնելով բազմազան հույզեր: Ձայնային տատանումները, ընկալվելով լսողական օրգանի միջոցով, փոխանցում են ինֆորմացիան դեպի ուղեղի համապատասխան մասեր: Տատանումներն անմիջականորեն ազդում են մարմնի և մեր կատարած գործունեության վրա: Երաժշտությունը հանգստացնող, երբեմն նաև բուժող միջոց է: Հայտնի է, որ օրգանիզմի վրա ուժեղ ազդեցություն ունի դասական և ժողովրդական երաժշտությունը: Երաժշտությունը մշտապես օգտագործվել է երեխաներին հանգստացնելու, սփոփելու, զբաղեցնելու և կրթելու համար: Երեխաների կյանքում խոսքը, շարժումը, խաղը և երգը միասնական են: Համարվում է, որ երեխայի բնական խոսքն ու շարժումները պետք է դառնան երաժշտական փորձառության խթաններ, և որ երեխաները պետք է երաժշտության ստեղծման գործում մասնակիցներ դառնան:

Յուրաքանչյուր մշակույթ ունի սիրո, փաղաքշանքի, ուրախության, խիզախության, տխրության երաժշտական դրսևորման իր ուրույն պարզունակ օրինակները, որոնք երեխաները հեշտորեն կարող են յուրացնել և դրանց միջոցով արտահայտել իրենց զգացմունքները: Երաժշտությունը զորեղ միջոց է սոցիալական զարգացումը խթանելու համար: Երեխաների խումբը կարող է համատեղ երգել կամ նվագակցել՝ մեծ հաճույք ստանալով այդ խմբային գործունեությունից: Հաճախ այն երեխաները, ովքեր դժկամությամբ են մասնակցում կամ ինքնարտահայտվում խմբային պարապմունքների ժամանակ, ավելի մեծ պատրաստակամությամբ են միանում երգին կամ պարին: Մանկական երգերից շատերը նախատեսում են զուգորդող շարժումների կատարում: Այս երգերը, որոնց ընթացքում երեխաները միաժամանակ կատարում են միևնույն շարժումները, հատկապես արդյունավետ են այլ հանգամանքներում պասիվություն դրսևորող երեխաներին աշխուժացնելու և ներգրավելու իմաստով:

Երաժշտությունը խթանում է նաև լեզվական ունակությունների զարգացումը: Մարդկային խոսքին հատուկ է թե՛ ռիթմիկ և թե՛ մեղեդային կառուցվածքը: Սովորաբար երեխաները խաղում են բառերի հետ ռիթմի և մեղեդու տարրերի կիրառմամբ: Այս բնական խաղը մանկավարժի կողմից կարող է օգտագործվել երեխաների ուշադրությունը լեզվի հնչողության վրա դարձնելու համար: Օրինակ՝ նա կարող է օգնել երեխաներին սովորել խմբի մյուս երեխաների անունները՝ ցուցադրելով յուրաքանչյուր երեխայի անվան ռիթմը ծափերի կամ դափերին հարվածելու միջոցով: Երաժշտությունը կարող է օգնել երեխաներին ընդլայնելու իրենց լեզվական կարողությունները: Մեղեդին հոկում է հիշողությունը, հետևաբար երեխան կարող է հիշել երգի այն բառերը, որոնք իր բնական խոսքից մի փոքր բարդ են, այնուհետև օգտագործել դրանք նաև իր խոսքում: Երաժշտությունը զարգացնում է բառապաշարը: Մեծ է այնպիսի երգերի թիվը, որոնք պարունակում են թվարկումներ ու երևույթների անվանումներ, որոնց միջոցով երեխաների բառապաշարը կհամալրվի նոր բառերով: Երեխաները կարող են ծանոթ մեղեդիների օգտագործմամբ սեփական երգեր հորինել՝ պատմելով իրենց պատմություններն ու արտահայտելով անհատական զգացողությունները: Երաժշտության միջոցով զարգանում են երեխաների շարժողական հմտությունները: Երաժշտական մատնախաղերը երեխային հնարավորություն են տալիս շարժելու մատներից յուրաքանչյուրն առանձին-առանձին՝ ի պատասխան որոշակի երգի, հետևաբար հոկում են աչքերի ու ձեռքերի կոորդինացիան: Պարզունակ ինքնաշեն գործիքները զարգացնում են նուրբ շարժողական հմտությունները, ինչպես դրանց պատրաստման, այնպես էլ նվագելու ընթացքում: Ինքնաբուխ պարերն ու երաժշտությանը համահունչ շարժումները ևս խթանում են շարժողական կոորդինացիան: Թեև երեխաների հորինած պարային շարժումները մեծապես նպաստում են նրանց զարգացմանը, տեղին է նաև ժողովրդական պարերի մի քանի հասարակ շարժումներ սովորեցնել նրանց խմբային ներկայացումների համար:

Երաժշտական դաստիարակության մեթոդներն ու հնարները կարելի է սահմանել որպես մանկավարժի փոխկապակցված գործունեության ամբողջություն, որն ուղղված է երեխաների երաժշտական ընդունակությունների զարգացմանը և երաժշտական մշակույթի ձևավորմանը: Մեթոդների և հնարների ընտրությունը կախված է երաժշտական դաստիարակության խնդիրներից ու բովանդակությունից:

Այսպիսով՝ երաժշտական դաստիարակության մեթոդների ընտրության ժամանակ մենք գնում ենք կենդանի դիտումից դեպի վերացական մտածողություն և դրա միջոցով դեպի գործնական աշխատանք:

Նախադպրոցական տարիքի երեխաների երաժշտական դաստիարակության և ուսուցման ժամանակ կիրառվում են միմյանց հետ սերտ կապակցված երեք մեթոդներ.

1. Զննական
2. Խոսքային
3. Գործնական մեթոդ

ՈՒսուցման այս կամ այն մեթոդական հնարի ընտրությունը որոշում է ՝ ելնելով երաժշտական պարապմունքի կոնկրետ խնդիրներից, երաժշտական նյութի բարդության աստիճանից, ուսուցման փուլերից և երեխաների զարգացման մակարդակից:ՈՒսուցման համար ընտրելով տարբեր մեթոդական հնարներ ՝ մանկավարժն առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով.

1. Ապահովել երեխաներին մատուցվող ստեղծագործությունների գեղարվեստական բարձր մակարդակը և կատարման որակը,
2. Հաշվի առնել տվյալ մանկական կոլեկտիվի առանձնահատկությունը՝ նրա ընդհանուր և երաժշտական զարգացածության մակարդակն ու կազմակերպվածությունը,
3. Նկատի ունենալ նախադպրոցական տարիքի երեխաների երաժշտական ընկալման պատկերավորությունը և կոնկրետությունը:

Գլուխ 2.Երաժշտառիթմիկական վարժությունները որպես երեխայի ռիթմի զգացողության միջոց:

Երաժշտառիթմիկ շարժում:Երաժշտառիթմիկ շարժման ժամանակակից համակարգը ստեղծել է շվեյցարացի մանկավարժ և երաժիշտ Էմիլ Ժակ- Դալկրոզը ՝ հաշվի առնելով երեխայի շարժվելու բնական պահանջը՝ կապված աճի հետ: Հայտնի է, որ երեխան շարժման միջոցով ճանաչում է աշխարհը: Կատարելով տարբեր խաղային , պարային շարժումներ՝ նա խորացնում է իր պատկերացումները շրջակա աշխարհի վերաբերյալ: Երաժշտությունը երեխաների մեջ առաջացնում է շարժվելու ցանկություն:Երաժշտության դաստիարակի խնդիրն այն է , որ կարողնա զարգացնել երեխայի՝երաժշտությանը համապատասխան շարժումն արագ կատարելու կարողությունը, և հարկ եղած դեպքում նաև դադարեցնի այն, այսինքն՝ պետք է զարգացնել երաժշտության բնույթի համապատասխան երեխայի շարժողական ռեակցիան: Նման պարապմունքների ընթացքում նկատվում է , որ պասիվ երեխաներն ակտիվանում են, իսկ ակտիվները՝ դառնում ավելի կարգապահ: Երաժշտառիթմիկ շարժման ընթացքում ամրանում է նաև երեխայի օրգանիզմը: Զարգանում են երաժշտական լսողությունը , հիշողությունը, ուշադրությունը , ճարպկությունը, շարժումների ճշգրտությունը , արագությունը, մշակվում են շարժման այնպիսի հատկություններ , ինչպիսիք են ՝փափկությունը , ճկունությունը, ինչը նպաստում է իրանի ճիշտ զարգացմանը:

Երաժշտառիթմիկ շարժման հիմքում ընկած են երաժշտական կերպարների ընկալումը և դրանք շարժման միջոցով պատկերելու , ներկայացնելու կարողությունը : Շարժվելով երաժշտությանը համապատասխան , երեխան ընկալում է դրա տարբեր արտահայտչամիջոցները, ներկայացնում մեղեդու բնույթն ու տեմպը,արձագանքում ուժգնության փոփոխություններին : Սկսում և ավարտում է շարժումները երաժշտական ֆրազներին համապատասխան, վերարտադրում է պարզ ռիթմական պատկերներ և այլն : Երեխան ընկալելով երաժշտության ռիթմի արտահայտչականությունը՝ կարողանում է ընկալել ամբողջ ստեղծագործությունը: Երաժշտառիթմիկ շարժումը հարստացնում է երեխաների հուզական աշխարհը, զարգացնում նրանց ճանաչողական կարողությունները, դաստիարակում ակտիվություն, կարգապահություն, կոլեկտիվի զգացողություն,նպաստում է օրգանիզմի ֆիզիկական կատարելագործմանը: Երաժշտառիթմիկ շարժման ընթացքում ավելի կարևորվում է երաժշտության արտահայտչամիջոցներից տեմպը, դինամիկան և մետրոռիթմը:

Երաժշտության տեմպից կախված երեխան շարժվում է արագ կամ դանդաղ՝ արագեցնելով կամ դանդաղեցնելով շարժումը: Մետրոռիթմը (երաժշտության ուժեղ և թույլ մասրն են տարբեր տևողությունների հարաբերությամբ) համակարգում է երեխայի շարժումները երաժշտության հետ: Արդեն կրտսեր խմբից դաստիարակի համակարգված աշխատանքի արդյունքում երեխաները կարողանում են ուժեղ և թույլ մասերի զգացողության շնորհիվ, տարբերել երկմասանի կառուցվածքը և փոփոխել շարժումները:

Դեռ վաղ մանկական տարիքից երեխան սիրում է վազել, թռչկոտել,պարային շարժումներ անել. սա դեռ խաղային, պարային գործունեություն չէ, քանի որ երեխան շարյվում է ոչ ճիշտ, ոչ էլ արտահայտիչ:

Կրտսեր առաջին խմբում արդեն զարգանում է երաժշտության նկատմամբ երեխաների հուիզական արձագանքը, զարգանում է երաժտությունն ունկնդրելու, հիշելու և դաստիարակի օգնությամբ կամ երաժշտության բովանդակությանը համապատասխան շարժումներ կատարելու կարողությունը:

Կրտսեր երկրորդ խմբում կարողանում են յուրացնել և կատարել շարժումներն ինքնուրույն, բայց այդ շարժումները դեռ լրիվ համակարգված չեն երաժշտության հետ. երեխաները դժվար են կողմնորոշվում տարածության մեջ, դժվարանում են կոլեկտիվ գործունեության մեջ, այդ պատճառով նրանց երաժշտառիթմիկ շարժումները բավականին համեստ են:Երեխաները սովորում են շարժվել խիստ հակասական բնույթի երաժշտության ներքո, արագ և դանդաղ տեմպերով, արձագանքել երաժշտության սկզբին, ավարտին և կատարել արագ շարժումներ:

Երաժշտառիթմիկ շարժման գործընթացում զարգանում են երեխաների երաժշտական որոշակին ընդունակություններ. մասնավորապես՝ երաժշտության ընկալումը, երաժշտառիթմական զգացողությունը, ռիթմիկ շարժումներ կատարելու, տարածության և ժամանակի մեջ ճիշտ կողմնորոշվելու կարողություններն ու գեղարվեստաստեղծագործական ունակությունները:

Երաժշտառիթմիկ շարժման հիմնական տեսակներն են՝

- Խաղը, պարը, վարժությունները
- քայլք, թեթև վազք, ցատկեր,
- մարմնամարզական շարժումներ համապատասխան պարագաներով՝ գնդակներ, ժապավեններ, դրոշակներ,
- պարային պարզ քայլեր և տարրեր,
- նմանողական շարժումներ՝ կենդանիների, թռչունների, մարդկանց տարբեր շարժումների նմանակում:

Այս բոլոր շարժումները նպաստում են երեխաների պատկերացումների և ստեղծագործական ակտիվության զարգացմանը:

Երաժշտական խաղը երեխայի ամենասիրելի և ակտիվ գործունեությունն է որն ուղղված է երաժշտառիթմիկ խնդիրների լուծմանը: Խաղը երեխաների մեջ առաջացնում է ուրախություն ,հրճվանք , ակտիվացում է նրանց զարգացումը նպաստում երաժշտական ունակությունների զարգացմանը:Խաղի ընթացքում երեխայի շարժումները դառնում են ավելի վարժ, զարգանում են դրական որակներ: Երաժշտական խաղերի ընթացքը սկսվում է երաժշտության ակտիվ ունկնդրումից, ինչը պահանջում է դրական արձագանք, երաժշտության արագ ընկալում ՝ կապված երաժշտական կերպարի բնույթի հետ: Երաժշտական խաղի ընթացքում երեխան որոշում է ստեղծագործության բնույթը, տեմպը , ուժգնությունը, առանձին մասերը:

Երաժշտառիթմիկ շարժման հաջորդ կարևոր տեսակը պարն է, որն ակտիվացնում է երեխայի լսողությունը , մշակում ճշգրիտ և գեղեցիկ շարժումներ և նպաստում ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Մանկապարտեզում իրականացվում են պարերի տարբեր տեսակներ՝

1. Հաստատված շարժումներով պարեր
2. Պար- իմպրովիզացիաներ

Պարերի հիմնական շարժումներն են ՝

1. Շրջանաձև քայլք իրար հետևից ,քայլ ոտնաթաթերի վրա, թեթև վազք,քայլ զույգերով, ցատկեր:
2. Շրջանի փոքրքցում և մեծացում, պտույտներ իր շուրջը և զույգերուվ:
3. Կից քայլք՝ կողմ, առաջ և հետ:
4. Դաստակների պտույտներ աջ և ձախ կողմերում ՝ անհատապես և զույգերով, ձեռքերի թափահարումներ:

Երաժշտառիթմիկ շարժման մյուս տեսակը վարժությունն է ՝ ուսուցման նպատակով միևնույն շարժման բազմակի կրկնությունը :Վարժությունների նշանակությունները տարբեր են ՝

- Վարժություններ ,որոնք նպատակ ունեն կատարելագործելու հիմնական շարժումները,
- Նախապատրաստական վարժություններ , որոնք նպատակ ունեն նախապատրաստելու նոր պարի կամ խաղի ուսուցմանը,
- Կերպարային վարժություններ , որոնք նպատակ ունեն ավելի լավ ներկայացնելու խաղային կերպարները:

Երաժշտառիթմիկ շարժման հիմնական խնդիրներն են՝

- Սկսել և ավարտել շարժումը երաժշտության հետ միաժամանակ , համապատասխանեցնել շարժումները երաժշտության բնույթին
- Կատարել հիմնական շարժումները
- Կատարել շարափոխումներ և մարմնամարզական վարժություններ դրոշակներով, թաշկինակներով, չխչխկաններով,
- Իրականացնել կերպարային և պարային տարրեր:

Մանկապարտեզում երաժշտությունը պիտի լինի վառ գույներով, ցայտուն կերպարներով:Հաճախ հարկավոր է խաղերը կատարել երգելով, քանի որ երգի բառերը հուշում են կատարվելիք շարժումները: Խաղերին զուգահեռ երեխաները զբաղվում են նոր պարերով, հիմնականում ժողովրդական, որովհետև այդտեղ կան շատ կրկնվող մասեր, որոնք շուտ են ընկալվում: Պարերը պետք է հարմարեցնել արդեն ծանոթ շարժումներին՝ ծափեր, դոփյուններ, դաստակների պտույտներ և այլն: Հաճախ միահյուսվում են գործունեության բոլոր տեսակները .շարժումն օգնում է երգի ուսուցմանը կամ ունկնդրման ընթացքին՝ օրինակ երբ երգում են նապաստակի մասին , երեխաները ցույց են տալիս նրա շարժումները, կամ եթե դաստիարակն բացատրում է ՝ ինչպես թեթև թռչել, համեմատում է գնդակի հետ:ՈՒսուցման հնարներն բազմաթիվ են : Ամենակարևորն այն է , որ դաստիարակը կարողանա երեխայի մեջ առաջացնել երաժշտության ուղեկցությամբ շարժվելու ցանկություն , նրանց ուշադրությունը հրավիրել երաժշտության բնույթի վրա և շարժումների միջոցով դրանք վերարտադրելու գործնթացին:

Դիտարկենք մեկ երաժշտության պարապմունք:

Թեման՝ ունկնդրել <<Իմ տիկնիկը >> երգը/ խոսք՝ Վ. Վարդանյանի, երաժշտությունը՝ Ա. Լուսինյանի/: Շարունակել ուսուցանել <<Դոփ- դոփիկ>> երգ վարժությունը: Կրկնել<<Ծափիկ ծափիկ>> երգ – վարժությունը:

Խնդիրները՝ ծանոթացնել երեխաներին օրորացային երաժշտությանը, սովորեցնել տարբերել երաժշտության ուժեղ և մեղմ հնչողությունը, համաչափ կատարել դոփյունները, փորձել դրանք համաձայնեցնել երգի բովանդակությանը: Զարգացնել երեխաների երաժշտական լսողությունը , հասկանալ երգերի բովանդակությունը, խթանել երգելու ցանկությունը:

Պարապմունքի ընթացքը

Երեխաները դահլիճ են մտնում աշխույժ երաժշտության ներքո, քայլում են , վազում , կատարում փափուկ կքանիստ, ծափ են տալիս, քայլում են արջի և ցատկում նապաստակի պես , ապա թռչկոտում են ծիտիկների նման:

Երեխաները նստում են աթոռակներին : Երաժշտության դաստիարակը ցույց է տալիս մի գեղեցիկ տիկնիկ և ասում.

-Երեխաներ՛, մեզ հյուր է եկել Շուշան տիկնիկը: Տեսնու՞մ եք ՝ի՛նչ գեղեցիկ է նա՝ կապույտ աչքերով , երկար մազերով :Ի՛նչ գեղեցիկ զգեստ է հագել: Եկեք տիկնիկին նստեցնենք դաշնամուրի վրա, թող նա ձեզ հետ միասին ունկնդրի երգը:

Երաժշտության դաստիարակը կատարում է երգը երեխաների համար, իսկ հետո հարցնում է նրանց , արդյոք դուր եկա՞վ երգը:Դաշնամուրից վերցնում է տիկնիկին և նրան նույնպես հարցնում , արդյոք դուր եկա՞վ երգը: Տիկնիկը<< պատասխանում է>>, որ իրեն շատ է դուր եկել երգը , և ինքը նորից է ուզում ունկնդրել այն:

Երգը հնչում է 2-3 անգամ: Ընթացքում դաստիարակն առաջարկում է երեխաներին <<քնեցնել>> տիկնիկին: Երեխաների ուշադրությունը հրավիրել օրորոցային մեղմ երաժշտության մեղմ բնույթի վրա: Այնուհետև դաստիարակն ասում է.

-Իսկ հիմա եկեք արթնացնենք տիկնիկին և պարենք նրա հետ: Պարում են ուժեղ երաժշտության ներքո՝ տարբերելու համար մեղմ և ուժեղ երաժշտությունը:

Շարունակում են սովորել <<Դոփ-դոփիկ>> երգ-վարժությունը:

Ելնելով երգի բովանդակությունից, կատարում են դոփյուններ, ծափեր: Կատարում են 2-3 անգամ:

Կրկնում են նաև <<Ծափիկ-ծափիկ>> երգ-վարժությունը: Ինքնուրույն կատարում են շարժումները, իսկ երգին ձայնակցում են դաստիարակի օգնությամբ: Երգում են 2-3 անգամ: Վազքով դուրս են գալիս դահլիճից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, երաժշտառիթմիկ շարժումը մի միջոց է , որով զարգանում են երաժշտության նկատմամբ երեխայի հուզական արձագանքը և ռիթմի զգացողությունը: Տեսնելով խաղային , պարային շարժումների, պարերգերի գեղեցկությունը, նրբագեղությունը, ձգտելով կատարել դրանք երաժշտությանը համապատասխան, երեխան սովորում է տեսնել և գնահատել գեղեցիկը, և այդ կերպ զարգանում է նրա գեղագիտական ճաշակը:

Մեր կողմից կատարված աշխատանքի արդյունքում մենք արձանագրեցինք, որ նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխաների մոտ երաժշտառիթմիկ վարժությունների կարողությունների մակարդակը այնքան էլ բարձր չէ և պետք է հատուկ նպատակադրված աշխատանք իրականացնել այս ուղղությամբ: Մանկապարտեզում երաժշտական դաստիարակության ուղղությամբ պետք է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Դաստիարակել հետաքրքրություն և հուզական վերաբերմունք տարբեր ժանրի երաժշտության նկատմամբ, զարգացնել երաժշտության ընկալումը, ծանոթ ստեղծագործություններն ըստ նախանվագի կամ մեղեդու հիշելու և տարբերելու կարողությունը:
- Զնավորել երեխաների կատարողական ունակությունները, երաժշտության տակ կատարվող ռիթմիկ շարժումների արտահայտչականությունը, պարերում և երաժշտական խաղերում իմպրովիզացիոն շարժումներ կատարելու կարողությունը:

Եկա այն եզրահանգման, որ համակարգված և նպատակաուղղված աշխատանքի արդյունքում երեխաները կկարողանան ունկնդրել երաժշտությունը , հիշել և ճանաչել այն, ուրախանալ և հրճվել նրանով:Նրանց մեջ կզարգանա հետաքրքրություն երաժշտության հանդեպ, որը հետագայում կվերածվի կայուն կապվածության:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Երաժշտություն.պարապմունքներ կրտսեր առաջին և կրտսեր երկրորդ խմբերի համար.Ուսումնամեթոդական ձեռնարկ:/Կ. Ղազարյան, Գ. Թադևոսյան,Լ. Սմբատյան-Եր. :Կրթության ազգային ինստիտուտ,2015.-256 էջ
2. Յու .Վ .Յուզբաշյան-« Կրտսեր դպրոցականների երաժշտական մտածողության զարգացումը»: